ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-86-Ո-249
2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի ԹԻՎ ԲԴԽ-55-Ո-123 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հանրապետության նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ ՆՀ-280-Ա, հոկտեմբերի 1-ի թիվ ՆՀ-307-Ա, հոկտեմբերի 8-ի թիվ ՆՀ-311-Ա և թիվ ՆՀ-312-Ա հրամանագրերը, Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ ԲԴԽ-70-Ո-170, հոկտեմբերի 4-ի թիվ ԲԴԽ-56-Ո-Կ-19, հոկտեմբերի 11-ի թիվ ԲԴԽ-29-Ո-Կ-09 որոշումները՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի օգոստոսի 20-ի «Դատավորների գործունեության հերթական գնահատման ժամանակացույցը հաստատելու և Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-62-Ո-173 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ ԲԴԽ-55-Ո-123 որոշման 1-ին հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 1-ին կետի 42-րդ տողն ուժը կորցրած ճանաչել,
2) Հավելվածի 1-ին կետի 49-րդ տողն ուժը կորցրած ճանաչել,
3) Հավելվածի 2-րդ կետի 84-րդ տողն ուժը կորցրած ճանաչել,
4) Հավելվածի 2-րդ կետի 92-րդ տողի «ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ» սյունակի «Վերաքննիչ վարչական» բառերը փոխարինել «Վճռաբեկ» բառով,

5) Հավելվածի 4-րդ կետի 210-րդ տողի «ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ» սյունակի «Լոռու» բառը փոխարինել «Կոտայքի» բառով,

6) Հավելվածի 4-րդ կետի 219-րդ տողի «ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ» սյունակի «Սյունիքի մարզի» բառերը փոխարինել «Երևան քաղաքի» բառերով,

7) Հավելվածի 4-րդ կետի 232-րդ տողի «ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ» սյունակի «Վարչական» բառը փոխարինել «Վերաքննիչ վարչական» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 21
ք. Երևան